

**Հայաստանի պետական ագրարային համալսարանում ցերեկային
ուսուցման բակալավրային համակարգի ուսանողներին, ուսումնական
տարվա առաջադիմության արդյունքներով, ուսանողական նխաստ և
կրթաթոշակ տալու, մրցույթի կազմակերպման (շրջափոխման) և
անցկացման**

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը մշակված է հիմք ընդունելով “Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքի հոդված 5-ի 3-րդ, հոդված 6-ի 4-րդ կետի, հոդված 17-ի 3-րդ կետի 7-րդ ենթակետի և հոդված 27-ին “ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին” N1183-ն որոշման, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության “Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով ուսանողական բպաստի տրման վերաբերյալ 2006թ. հունիսի 15-ի N 21-03-06/337 հրահանգչական նամակը (լրացումով) և կարգավորում է՝ ուսանողների տարեկան առաջադիմության հաշվարկի մեթոդիկայի և ուսանողական նպաստ տալումրցույթի պայմանների մշակումը,մրցույթի կազմակերպման ու իրականացման ընթացակարգը:

2. Սույն կանոնակարգը տարածվում է 2006թ սեպտեմբերի 1-ից 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների և հետագայում ՀՊԱՀ ընդունվող բոլոր ուսանողների (անվճար և վճարովի) վրա և գործում է նրանց ուսումնառության բոլոր տարիների ընթացքում:

3. Պետությունը ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է՝

ա. մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցողներին մրցութային կարգով

բ. օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

· առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց

· 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց

· զոհված զինծառայողի երեխա-ուսանողին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին

գ. պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին

դ. պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին

ե. ՀՀ կառավարության կողմից պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդներին հատկացված անվճար տեղերի հաշին՝ 1-ին կուրսի անվճար համակարգ ընդունված ուսանողների, որպես նպատակային ընդունելությամբ ընդունվածներ (հիմք՝ ՀՀ ԿԳ նախարարության N **21-03-06/513** առ. **12.09.2006**թ. գրությունը)

զ. հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի կամ զինծառայության), մինչև Հ ՀՀ ՀՀ կառավարության **2006**թ-ին N**1183**-ն որոշման ընդունումը, համալսարանից ազատված ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած նպաստ ստանալու իրավունքը (հիմք ՀՀ կառավարության նշված որոշման **9**-րդ կետը)

4. Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց, զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են **1**-ին կուրսից մինչև ծրագրի ավարտը: **1**-ին և **2**-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողների փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են **1**-ին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

5. ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով առաջին կուրս ընդունված ուսանողների ուսանողական նպաստը տրվում է ըստ ընդունելության մրցույթի արդյունքների, առավել բարձր մրցութային միավոր հավաքած ուսանողներին՝ ՀՀ կառավարության հատկացված տեղերի հաշվին: Հավասար միավորների դեպքում առաջնությունը տրվում է համասլարանի կողմից տվյալ մասնագիտության ընդունելության քննական առավել կարևոր առարկայից բարձր միավոր ստացած ուսանողներին:

Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցողներին՝ մրցութային հիմունքներով:

6. Նպաստներ տալու (շրջափոխման) գործընթացին չեն մասնակցում սփյուռքահայն արտասահմանյան երկրներից համալսարան ընդունված (կամ փոխադրված, վերականգնված) ուսանողները, եթե նրանք ընդունվել են (փոխադրվել են) վճարովի համակարգում: Սույն կետը չի տարածվում այլ երկրներից ՀՀ ԿԳ

նախարարության կողմից սահմանված կենտրոնացված ընդունելության կարգով համալսարան ընդունված ուսանողների վրա:

7. Համալսարանի մի ֆակուլտետից մի այլ ֆակուլտետ կամ մի մասնագիտությունից մի այլ մասնագիտություն, ինչպես նաև այլ բուհերից համալսարան տեղափոխվող ուսանողները (բացառությամբ 3-րդ բ), գ), դ), ե) ենթակետերի տարակարգերի ուսանողների) փոխադրման ուսումնական տարում չեն մասնակցում նպաստների տրման շրջափոխման գործընթացին, անկախ նրանց նախորդ ուս. տարվա առաջադիմության արդյունքներից: Հաջորդ տարիներին մասնակցում են նպաստ տալու մրցույթին, համաձայն սույն կանոնակարգի:

8. Հայաստանի պետական ագրարային համալսարանի (ՀՊԱՀ) տնտեսագիտական ֆակուլտետի “Ագրոբիզնես և շուկայաբանություն” (2009թ-ից հանդիսանում է ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի մասնագիտություն) մասնագիտությամբ սովորող ուսանողները, ովքեր տեղափոխվում են “Ագրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտ”, փոխադրման առաջին տարում ուսանողական նպաստ և կրթաթոշակ տալու մրցույթին մասնակցում են նախորդ ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով, տվյալ մասնագիտությանը ամրագրված անվճար տեղերի շրջանակում:

9. ՀՊԱՀ տնտեսագիտական ֆակուլտետի այլ մասնագիտություններից, ինչպես նաև այլ ֆակուլտետների տարբեր մասնագիտություններից Ագրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտի “Ագրոբիզնես և շուկայաբանություն” մասնագիտություն տեղափոխված (փոխադրված) ուսանողները փոխադրման տարում սովորում են վճարովի համակարգում:

10. Ագրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտի Ագրոբիզնես և շուկայաբանություն” մասնագիտություն փոխադրված (տեղափոխված) բոլոր ուսանողները հաջորդ տարիներին մասնակցում են նպաստների և կրթաթոշակների տրման մրցույթին ընդհանուր հիմունքներով Ագրոբիզնես և շուկայաբանություն” մասնագիտությանը ամրագրված անվճար տեղերի շրջանակներում:

2. Ուսանողների առաջադիմության հաշվարկման, մրցույթի անցկացման և առաջադիմության արդյունքներով կարգավիճակի շրջափոխման ընթացակարգը

11. Ուսանողական նպաստների քանակը (անվճար ուսուցման տեղերի քանակը) ըստ մասնագիտությունների և կուրսերի սահմանվում է ՀՀ կառավարության կողմից, պետական բյուջեով ամրագրված նպաստների քանակով:

12. Ուսանողների առաջադիմությունը գնահատվում է հինգ և քսան (5 և 20) միավորների համակարգով, իսկ տարեկան միջին միավորը որոշվում է երկու կիսամյակների քննությունների միջին թվաքանակնանով՝ 0.1-ի ճշտությամբ

(կլորացման մեթոդով): Եթե տվյալ կիսամյակում առարկան ավարտվում է դիֆերենցիալ ստուգարքով, ապա միջին միավորի որոշման ժամանակ, հաշվի չի առնվում դիֆերենցիալ ստուգարքի գնահատականը, այն հաշվի է առնվում հավասար միավորների դեպքում (սկսած 2006-2007 ուս. տարվանից):

13. Ուսանողների առաջադիմության միջին գնահատականը որոշվում է առարկայական պարտքերի վերջնական մարումից հետո, բայց ոչ ուշ քան մինչև սեպտեմբերի 10-ը (միջին միավորի որոշման ժամանակ հաշվի է առնվում առարկայական պարտքի մարման դրական գնահատականը): Առաջադիմության արդյունքերի հաշվառման ժամանակահատվածում հավասար միջին միավորների դեպքում առաջնությունը տրվում է

- Տվյալ կիսամյակում դիֆերենցիալ ստուգարքից առավել բարձր միավոր ստացած ուսանողներին
- Քննաշրջանի ընթացքում բոլոր քննությունները դրական հանձնած ուսանողներին, բացառությամբ այն ուսանողների, ովքեր քննաշրջանում քննություններին չեն ներկայացել հարգելի պատճառով, սահմանված կարգով և սահմանված ժամկետին ներկայացրած փաստաթղթերի առկայության դեպքում
- Անհարգելի բացակայություններ չունեցող ուսանողներին
- Համալսարանի կամ ֆակուլտետի ուսանողական խորհրդի անդամներին
- Մասնագիտական, ընդհանուր մասնագիտական կամ տվյալ մասնագիտության համար առավել կարևոր առարկաներից առավել բարձր միավոր ստացած ուսանողներին
- Նախորդ ուսումնական տարում մրցույթի արդյունքներով անվճար համակարգում սովորող ուսանողներին
- Ուսանողական գիտական ընկերություններում (ՀՊԱՀ) ուսումնահետազոտական աշխատանքներ կատարած և հատարակած աշխատանքեր ունեցող ուսանողներին
- Միջբուհական, հանրապետական կամ միջազգային առարկայական օլիմպիադաների մրցանակակիրներին
- Պատշաճ վարքագիծ ունեցող ուսանողներին
- Զինվորական ծառայությունը ավարտած ուսանողներին
- Սոցիալապես ծանր վիճակում գտվող ուսանողներին (ամրագրված համապատասխան փաստաթղթերով)

Դրանց հավասարության դեպքում ուսանողական նպաստը հավասարապես բաշխվում է տվյալ տեղին հավակնող մրցակից կողմերի ուսանողների միջև, իսկ վարձավճարի մյուս կեսը հավակնորդները մուծում են հավասարապես

14. Առաջադիմության արդյունքների հիման վրա ուսանողական նպաստների հաշվարկման մրցույթը կազմակերպում է համալսարանի ուսանողների նպաստների նշանակման մանդատային (մրցութային) հանձնաժողովը, որի կազմում ընգրկվում են ռեկտորատի, ֆակուլտետի, ուսանողական խորհրդի և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: Մանդատային (մրցութային) հանձնաժողովի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով

15. Ուսանողական նպաստների նշանակման մանդատային (մրցութային) հանձնաժողովը, մրցութով անցած նպաստատուների ցուցակը մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 10-ը ներկայացնում է ռեկտորատի քննարկանք, որի հաստատումից հետո՝ հրամանագրման:

16. Ուսանողական նպաստների տրամադրման (նշանակման) ամփոփ արդյունքները մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 30-ը ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն

17. “Կրթության մասին ՀՀ օրենքով” սահմանված չափաքանակի շրջանակում, համալսարանի միջոցների հաշվին, ուսանողի սոցիալական վիճակի և կիսամյակի արդյունքներով բարձր առաջադիմության հաշվառմամբ ուսման վարձի մասնակի (ներքին) զեղչի ձևով ուսանողական նպաստներ է տրամադրվում.

ա. Սոցիալապես անապահով ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների ուսանողներին, սահմանված փաստաթղթերի առկայության դեպքում,

բ. Միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանողներին

գ. Երեք և ավելի անչապահաս կամ երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքի ուսանողներին

դ. Նույն բուհում, վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանողը-երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներից մեկին (առավել բարձր առաջադիմություն ունեցողին)

ե. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին

զ. Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին

է. Մինչև մեկ տարեկան երեխա ունեցողներին

ը. Համալսարանի հայեցողությամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին

Ծանոթություն՝ 17-րդ կետով սահմանված զեղչերը չեն տարածվում առանց տարկետման արտոնության բուհ ընդունված (կամ այլ բուհից փոխադրված) ուսանողների):

18. Համալսարանի ֆինանսական միջոցների հաշվին **17**-րդ կետով նախատեսված վարձավճարի մասնակի գեղջի (նպաստների տեսքով) տրման հարցը քննարկվում է ուսումնական տարվա ընթացքում երկու անգամ կիսամյակի առաջադիմության արդյունքներով, ուսանողների դիմումների հիման վրա: Նախնական քննարկումները կատարվում է ֆակուլտետներում՝ ուսանողական խորհուրդների մասնակցությամբ, վերջնական քննարկումը կատարվում է համալսարանի ռեկտորատում, արդյունքները հաստատվում են ռեկտորի հրամանով:

19. Որպես կանոն ներբուհական ուսանողական վարձավճարի գեղջի հայցման դիմումները ընդունվում են յուրաքանչյուր տարվա հունվարի **15**-ից մինչև փետրվարի **15**-ը և օգոստոսի **15**-ից մինչև սեպտեմբերի **15**-ը: Մասնակի գեղջը տրվում է նախորդ կիսամյակի առաջադիմության արդյունքներով և այդ մասին հրամանի գործողությունը տարածվում է միայն առաջիկա (ընթացիկ) կիսամյակի վրա

3. Պետական կրթաթոշակի տրամադրումը

20. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է ուսանողներին: Պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար:

Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են.

ա. Մասնակցությունը ֆակուլտետի և բուհի ուսանողական, հասարակական աշխատանքներին

բ. Զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներով)

գ. Մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին

դ. Այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնություններ՝ բուհի հայեցողությամբ:

Սույն կարգի իմաստով ուսանողների պատշաճ վարքագիծը ներքին կանոնների պահպանումն է:

21. Համալսարանում պետական կրթաթոշակի թիվը և չափը յուրաքանչյուր տարի սահմանվում է ՀՀ կառավարության կողմից

22. Ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին, համաձայն սույն կանոնակարգի **20-րդ** կետով նախատեսված պայմանների: Մահմանված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Պետական կրթաթոշակից զրկված ուսանողը կարող է ընգրկվել ուսանողական նպաստառուների համակարգում սույն կանոնակարգի **3-րդ** կետի պահանջները բավարարելու դեպքում:

23. Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են այլ ուսանողների

24. Հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի կամ զինձառայության) համալսարանից ազատված ուսանողը վերականգման տարում պահպանում է նախկինում ունեցած կրթաթոշակ ստանալու իրավունքը: Հաջորդ տարիներին մասնակցում է պետական կրթաթոշակ տալու մրցութին համաձայն սույն կանոնակարգի պահանջների:

Քննարկվել և երաշխավորվել է հաստատման

ՀՊԱՀ-ի գիտական խորհրդի **2007**թ հուլիսի **16**-ի

նիստում (արձ. N**14**)